


թուղին, զոր անգլիական ձեռնարկուք 15 տարիե վեր կը գործածեն: Որովհետեւ Հայտարարաւս Գոլայո շրջանակին մէջ է եւ այս աշխարհաբարաբն հետ անընդհատ յարաբերութիւն ունի, երկաթուղւոյ շինութեան ապահով խաւրիսի մըն է այս, եւ շինութեան պէտք եղած նիւթերն, զոր իզմիտ գտնել կարելի չէ, Կ. Պոլսոյ վրայէն կարելի է հասցընել:

Ռուսաստանի հոռնայր: Ռուսաստանի 1889 տարւոյ հունիսը Ռուսիոյ երեւմտեց պաշտօնարանն առած տեղեկութեան համեմատ հետեւեալն է.

	1000 4 հոս վէր (2.09 Նոյրեմբր)	1887	1888	1889
Հաճար	125.000	118.500	102.500	
Չմբուան ցորեն	16.600	18.700	7.000	
Սմբուան ցորեն	30.100	31.000	26.800	
Սարափ	103.500	91.500	90.000	
Գարի	28.200	26.500	20.200	
Կորեակ	8.750	9.150	6.650	
Չեւորեակ	10.400	10.800	10.100	

Սմբուան ցորենն ու վարսակը միջին հունիսը միայն աւելի է: Հաճարի պահանս 9 1/2 միլիոն ֆէթլը կամ 8 2/3 առ. հարիւր է, իսկ ձմբուանը 4 1/3 միլիոն կամ 39 առ. հարիւր: Գետնախնձորը միջին հունիսը աւելի էր, գոհացուցիչ էր միայն Պետսարպիա, քերսոն, Ցաւրիս, Վորոնէշ եւ Եկապերիմսոյաւ: Կոշնպէս եգիպտացորենը միջին հունիսը առաւ:



ՅՈՒՆԱՆՅՈՒՆ

ՆՈՐԱՆՈՐԱՆ

Նոր ներկանիւթ մ'ի Պարսկաստան:

Ինչպէս Chemiker Zeitung կը ծանուցանէ, Նիւշի-Նալկորտի այս տարւոյ օտանկաճառին մէջ կը վաճառուի Պարսկաստանէն բերուած Ugom առաւանի ներկանիւթ մը, որ խորաստնի մէջ կը գործածուի: Գոյնը դրժմ է այնպէս զգուար, ազնիւ եւ աւեական է, ինչպէս տարսնի ներկինք (alizarine): Այս ներկանիւթով ներկուող բամբակի եւ մետաղ-սեպոյ նիւթ երաւ օրհնակներ նշնպէս ի տես դուռած են Նոյն տեղը:

ՏՆՏԵՍՈՎԱԴՆ

Չիթոյ լոծնիւ մարմորէն ճընկ:

Գարաճիթ ոյ եւ ձիթ ոյ ծերեր մարմորի վրայէն հանելու համար պէտք է գառնիճ հողը (magnésie) եւ բնակնգուր (benzine) խառնել եւ գանգուած

մը կողմէ. Նոյնը բծի վրայ տարածելու է եւ սոյն վիճակի մէջ 24 ժամ թող տալու է: Եթէ բիծն առաջին անգաման բոլորովին չլինէ, պէտք է գործողութիւնը կրկնել:

Կրտսեմ ռախալիսի գամագանձնոյսարգ նշանակը:

Եթէ կտուրի կամ բամբակի դերձան մ'առնուի, զգուշութեամբ ուրեքն եւ յետոյ քիչ մը ձգալով փրցենք, եւ բբգած ծայրերը դիտենք, հետեւեալ երեսնութները կը տեսնուի: Բամբակէ դերձանը շատ դիւրաւ կը բբրի, եւ բբգած ծայրն դանդաղանման եւ ոտանման ուրուած փերուայ. իսկ կտուռ դերձանը ձեռքին մօտ կը բբրի եւ ծայրի մազակուներն ուղիղ եւ անսլոր կը մնան: Փորձառու մը շատ դիւրաւ կը ճաննայ այս եղանակաւ տարբերութիւնը, եւ որեւէ Նիւթոյ խառնուրդը կրնայ որոշել:

ՍՈՆԵՐԱՆՈՐԱՆ

Հոռնակարը ռոռարմիկ ընկ:

Ի տեսնակարներու տարի մէջ լուսարմիկ ընկու համար հետեւեալ պարզ եղանակը կրնայ ի գործ դրուիլ: Ըստ կարի հաստարաշափ բարակ խաւարաւ մը պէտք է օսլայ (սիւս-սիւ) սնձով օծել, եւ քանի որ չէ շորքած վրան փոշիացել ծծմբաթթիւ ուային ծանրահող (barium sulfate) կամ ծծմբաթթիւ ուային կիր ցանելու է, եւ որպէս զի փոշին աճն կողմ կայի՞ վրձնով շատ անգամ տարածելու է: Հիմայ խոգիւր լուսանկարը, որ խաւարաթի վրայ կպած պիտի չըլլայ, թափանցիկ ընելու վրայ է. զոր կրնանք այս կերպով ընել: Պատկերին ետեւի կողմը աղնուոյ (ricin) իւղով օծելու եւ աւելորդ իւղը մաքուր լաթով մը սրբելու է: Այս թափանցիկ պատկերը վերոյիշեալ կերպով պատրաստուած խաւարաթիւն վրայ կպընելու եւ վառարանի մը քով շորքընելու է. յետոյ այս պատկերը լուսոյ առջեւ դնելու է: Արեւու ճառագայթներն այս թափանցիկ թղթին անցնելով՝ կը հասնին եւ կը թափանցեն փողոյն մէջ. փողոյն լոյս կը կլնէ եւ վերէն կը սփռի ճառագայթի արձակել, վրան զի այս գործողութիւններով փողին լուսածին մարմին մը կ'ըլլայ, միջոյ մէջ կը փայլի եւ յեականաւ բուն պատկերէն չի տարբերի. որովհետեւ փողոյն տարածեալ լոյսը կ'արձակեն: Այս երեւոյթն ստուգելու շատ չքեղ է:

